Կարգապահական գործ թիվ 14-050

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ
2015 թվականի հունվարի 12-ի թիվ 1-ին ԿԳ նիստի

ՈՐՈՇՈՒՄ թիվ ԿԳ/1-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (հետագայում՝ Խորհուրդ), նախագահությամբ Ալեքսանդր Սիրունյանի, մասնակցությամբ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի,Մարտուն Փանոսյանի, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, 2015 թվականի հունվարի 12-ին Երեւան քաղաքում քննության առնելով փաստաբան Ռուբիկ Մովսիսյանի (արտոնագիր թիվ 846) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

պարզեց

Քաղաքացի Ալվինա Հովհաննիսյանը (հետագայում՝ Դիմող) 2014 թվականի ապրիլի 7-ին դիմել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահին՝ փաստաբան Ռուբիկ Մովսիսյանին (հետագայում՝ Պատասխանող) կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով:

Դիմողը, մասնավորապես, հայտնել է, որ թիվ 18137612 քրեական գործով իրականացնելով իր եղբոր, Քրեական օրենսգրքի 242 հոդվածով մեղադրվող Ռոլանդ Հովհաննիսյանի շահերի պաշտպանությունը, Պատասխանողը անթույլատրելի շփումներ է ունեցել տուժող կողմի հետ, այդ թվում՝ վերջիններիս փոխանցել է իրեն հայտնի տեղեկությունները, բացահայտելով փաստաբանական գաղտնիքը:

Դիմողը նշել է նաեւ, որ Պատասխանողը ձախողել է տուժողների հետ հաշտվելու փորձերը, որի արդյունքում Ռոլանդ Հովհաննիսյանը դատապարտվել է ազատազրկման:

Դիմումի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2014 թվականի մայիսի 5-ի թիվ 151-Ա/ԿԳ-14050 որոշմամբ

Պատասխանողի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 հոդվածի եւ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2., 2.3.1., 2.7.2. եւ 3.5.3. կետերի հատկանիշներով: Կարգապահական վարույթի իրականացումը հանձնարարվել է կարգապահական գործ նախապատրաստող, փաստաբան Ստեփան Ոսկանյանին:

2014 թվականի հուլիսի 2-ին կարգապահական վարույթի նյութերը հանձնվել են Խորհուրդ:

Կարգապահական գործի նախապատրաստման, ինչպես նաեւ Խորհրդում հարցի քննարկման ընթացքում Դիմողը տվել է բացատրություն այն մասին, որ թիվ 18137612 քրեական գործով իրականացնելով իր եղբոր, Քրեական օրենսգրքի 242 հոդվածով մեղադրվող Ռոլանդ Հովհաննիսյանի շահերի պաշտպանությունը, Պատասխանողը անթույլատրելի շփումներ է ունեցել տուժող կողմի հետ, վերջիններիս փոխանցել է իրեն հայտնի տեղեկությունները, բացահայտել է փաստաբանական գաղտնիքը, ձախողել է տուժողների հետ հաշտվելու փորձերը, դատական նիստերին ներկայացել է ուշացումներով, որի արդյունքում Ռոլանդ Հովհաննիսյանը դատապարտվել է ազատազրկման:

Բացի այդ, դիմողը նշել է նաեւ, որ Ռ.Հովհաննիսյանի դատապարտվելուց հետո Պատասխանողը միջոցներ չի ձեռնարկել՝ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ համաներման ակտի կիրառումն ապահովելու եւ վերջինիս ազատ արձակելու ուղղությամբ:

Կարգապահական գործի նախապատրաստման, ինչպես նաեւ Խորհրդում հարցի քննարկման ընթացքում Պատասխանողը տվել է բացատրություն այն մասին, որ թիվ 18137612 քրեական գործով վրաերթ կատարելու մեջ Քրեական օրենսգրքի 142 հոդվածով մեղադրվող Ռոլանդ Հովհաննիսյանի պաշտպանությունը:

Պատասխանողը նշել է, որ թիվ 18137612 քրեական գործով փաստաբանական գաղտնիք չի բացահայտել եւ տուժող կողմի հետ անթույլատրելի շփումներ չի ունեցել: Նշել է նաեւ, որ Հովհաննիսյանների ընտանիքի կողմից տուժող կողմի հետ հաշտվելուն չի խոչընդոտել: Ավելին, գործով որպես պաշտպան ներգրավվել է 2013 թվականի մարտի 4-ից, մինչդեռ քրեական գործը հարուցվել էր ավելի վաղ, ուստի տուժող կողմի հետ հաշտվելու բավական ժամանակ կար:

Պատասխանողը նշել է նաեւ, որ գործի քննության ընթացքում ձեռնարկվել են բոլոր միջոցները՝ Ռ.Հովհաննիսյանի պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար, այդ թվում՝ իր նախաձեռնությամբ դատաքննության ընթացքում ձեռք են բերվել եւ հետազոտվել նոր ապացույցներ: Իրականացված պաշտպանության արդյունքում նաեւ դատարանը մասնակիորեն է բավարարել ներկայացված հայցը, հայցագին կազմող 3 մլն. դրամի փոխարեն Ռ.Հովհաննիսյանից բռնագանձելով միայն 1 մլն. 1 հարյուր հազար դրամ:

Միաժամանակ, Պատասխանողը նշել է, որ Դիմողը առհասարակ իր դեմ բողոքներ ներկայացնելու իրավունք չուներ, քանի որ թիվ 18137612 քրեական գործով պաշտպանությունն իրականացնելու պատվիրատու չի հանդիսացել:

Քննարկելով թիվ 14-050 կարգապահական գործով ձեռք բերված ապացույցները, Խորհուրդը հաստատված համարեց հետեւյալ փաստերը.

1) Ռոլանդ Հովհաննիսյանի կողմից Հակոբ Քեչեջյանին վրաերթի ենթարկելու փաստի առթիվ 2012 թվականի նոյեմբերի 20-ին հարուցվել է թիվ 18137612 քրեական գործը,

2) 2013 թվականի փետրվարի 14-ին Ռ.Հովաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարք կատարելու մեղադրանքով,
3) 2013 թվականի մարտի 4-ից Ռ.Հովհաննիսյանի պաշտպանությունը ստանձնել է Պատասխանողը,
4) Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի օգոստոսի 7-ի դատավճռով (քրեական գործի թիվ ՇԴ 0019/01/13) Ռոլանդ Հովհաննիսյանը դատապարտվել է ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով՝ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարք կատարելու համար, ինչպես նաեւ լրացուցիչ պատժի: Միաժամանակ դատարանը մասնակի բավարարել է տուժողի իրավահաջորդի քաղաքացիական հայցը եւ վճռել է Ռ.Հովհաննիսյանից բռնագանձել 1.100.000 դրամ,
5) Դատավճիռը չի բողոքարկվել եւ մտել օրինական ուժի մեջ (թիվ ՇԴ 0019/01/13 Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի օգոստոսի 7-ի դատավճիռ, գ/թ 23-28):

Կարգապահական գործի քննությամբ Պատասխանողի անձը բացասական բնութագրող ապացույցներ ձեռք չեն բերվել:

Քննարկելով Պատասխանողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, Խորհուրդը գտավ, որ թիվ 14-050 կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետեւյալ պատճառաբանությամբ.

Թիվ 14-050 կարգապահական վարույթը հարուցվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 հոդվածի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2., 2.3.1., 2.7.2. եւ 3.5.3. կետերի հատկանիշներով, համաձայն որոնց.

- փաստաբանական գաղտնիքի հրապարակումն արգելվում է, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի,
- փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն),
- գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է, այսինքն՝ վստահորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք նա չի փոխանցի ուրիշների, և փաստաբանը պետք է այդ տեղեկատվության տիրապետողը լինի գաղտնիության հիմքի վրա:
- Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում,
- փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի

դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման կարգի 28 հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.7 հոդվածի վեցերորդ մասի եւ Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման կարգի 30 հոդվածի վեցերորդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Նույն կարգի 15 հոդվածի առաջին, երկրորդ եւ հինգերորդ մասերի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Թեւ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է Նախապատրաստողը, Պալատի խորհուրդը կաշկանդված չէ Նախապատրաստողի դիրքորոշումով և կարող է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը փոփոխել: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Տվյալ դեպքում, թիվ 14-050 կարգապահական վարույթի շրջանակներում իրականացված քննությամբ ձեռք չեն բերվել, այդ թվում՝ Դիմողի կողմից չեն ներկայացվել, թույլատրելի եւ վերաբերելի ապացույցներ, համաձայն որոնց թիվ 18137612 քրեական գործի քննության ընթացքում Ռոլանդ Հովհաննիսյանի պաշտպանությունն իրականացնելիս, փաստաբան Ռուբիկ Մովսիսյանը թույլ է տվել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 հոդվածի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2., 2.3.1., 2.7.2. եւ 3.5.3. կետերի խախտումներ:

Նկատի ունենալով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածի հինգրերորդ մասի 14-րդ կետով, 39.7 հոդվածով, 39.8 հոդվածի առաջին մասի երկրորդ կետով, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26 կետով, Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 28 հոդվածի առաջին մասի 2-րդ կետով եւ 30 հոդվածի հինգերորդ մասի 2-րդ կետով Խորհուրդը

որոշեց

1. Փաստաբան Ռուբիկ Մովսիսյանին նկատմամբ հարուցված թիվ 14-050 կարգապահական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուղարկել քաղաքացի Ալվինա Հովհաննիսյանին եւ փաստաբան Ռուբիկ Մովսիսյանին:
3. Ալվինա Հովհաննիսյանին եւ Ռուբիկ Մովսիսյանին պարզաբանել, որ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30 հոդվածի ութերորդ մասի համաձայն՝ սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով այն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում եւ օրինական ուժի մեջ է մտնում նշված ժամկետն անցնելուց հետո:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող **Ալեքսանդր Սիրունյան**